

ԵԱՆ ՊՈՏՈՑԿԻՆ ԵՒ ՆՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Այս գեկոյցի թեման է լեհագլխի կոմս Եան Պոտոցկու (1761-1815) գործունեությունը կապուած Արեւելեան Հայաստանի հետ այն ժամանակաշրջանում, երբ սկսում էր ամբողջ անդրկովկասեան տարածքի գրաւումը Ռուսաստանի կողմից: Սա քիչ յայտնի պատմական մի դրուագ է, որը, սակայն, ըստ իս, բաւականին հետաքրքրի է, քանի որ, նախ եւ առաջ, հանդիսանում է Ռուսական կայսրութեան տուեալ պատմական շրջանի քաղաքական, մշակութային եւ ազգային բազմազանութիւնն ի յայտ բերող մի օրինակ: Բացի դրանից, այս բազմազանութիւնը յաճախ անտեսուել է աւանդական ռուսամէտ պատմագրութեան կողմից, որը գերակշռում էր ոչ միայն Ռուսաստանում եւ Խորհրդային միութիւնում, բայց նաեւ արեւմտեան գիտնականների մեծ մասի աշխատանքներում, առնուազն մինչեւ 1992թ.-ին Անդրէաս Կապլէրի կողմից հրատարակուած «Ռուսաստանը որպէս բազմազգ պետութիւն» *Rußland als Vielvölkerreich* ուսումնասիրութիւնը¹:

Այսօր Եան Պոտոցկին (1761-1815) յայտնի է մանաւանդ իր՝ գեղարուեստական գրականութեան Փանտաստիկ ժանրին պատկանող գլուխգործոցի՝ «Սարագոսայում գտնուած ձեռագիրը» գրքի (*Le manuscrit trouvé à Saragosse*) շնորհիւ, գրուած Ֆրանսերէն լեզուով 1803-1804 թուականներին, որի բնօրինակը վերայայտնաբերեց եւ լոյս ընծայեց Ռոժէ Կայլուան 1958թ.-ին²: Եան Պոտոցկին, բազմակողմանի կրթութեամբ եւ լուսաւորչական գաղափարներով տոգորուած մի անհատ, Լեհաստանի ամենակարե-

¹ Գոյութիւն ունեն այս աշխատանքի թարգմանութիւնները Ֆրանսերէն (*La Russie: empire multiethnique*, Paris 1994), ռուսերէն (*Россия - многонациональная империя*, Москва 1996), եւ անգլերէն լեզուներով (*The Russian Empire. A Multiethnic History*, London 2001): Տողերիս հեղինակը ներկայումս պատրաստում է գրքի իտալերէն թարգմանութիւնը:

² Իտալերէն թարգմանութիւնը. *Il manoscritto ritrovato a Saragozza*, խմբագիր R. Cailliois, Milano 1965.

ւոր ազնուական ընտանիքներից մէկին էր պատկանում: Երիտասարդական տարիներին զբաղուել էր ակտիւ քաղաքական գործունէութեամբ՝ փորձելով իր լուսման ներդնել հայրենիքի անկախութեան պահպանման գործին, բայց առանց յաջողութեան³: Լեհաստանի բաժանումը Ռուսաստանի, Պրուսիայի եւ Աստրիայի միջեւ վերջ դրեց Պոտոցկու քաղաքական գործունէութեանը, որից յետոյ նա նուիրուեց գիտական հետազոտութիւնների՝ յատկապէս սլաւոնական հնագոյն պատմութեան ոլորտում, եւ ճանապարհորդութիւնների, որոնց ընթացքում նա բազմիցս այցելեց նախ Միջերկրածովեան երկրներ, իսկ յետոյ Կովկաս, եւ վերջապէս Միջին Ասիա եւ Չինաստան⁴:

Պոտոցկու այս ճամփորդութիւնները նկարագրող բազմաթիւ գրքերից ինձ յատկապէս հետաքրքրում է մէկը, նուիրուած Կովկասին եւ տպագրուած յետմահու՝ արեւելագէտ Կլապրոթի կողմից (1783-1835), որը Պոտոցկուն ուղեկցել էր, ի վերջոյ ճանորդութեան մանտուած, մի առաքելութեան ընթացքում դէպի Չինաստան, եւ որը յետագայում կարեւոր դեր խաղաց Կովկասեան ուսումնասիրութիւնների զարգացման ոլորտում: Աւելի ճշգրիտ լինելու համար ասենք, որ Կլապրոթն այս տեքստը տպագրեց երկու հրատարակութեամբ, մէկը 1827թ.-ին «Կոմս Եան Պոտոցկու ֆամիլորդուքիւմն Աստրախան եւ շրջակայ տարածքը 1797թ.-ին» վերնագրով (*Voyage du Comte Jean Potocki à Astrakan et dans le cantons voisins en 1797*), իսկ միւսը՝ 1829թ.-ին «Ճամփորդութիւն Աստրախանի եւ Կովկասի ստեպեր» վերնագրով (*Voyage dans les steppes d'Astrakhan et du Caucase*): Այս գրքի մասին Ալեքսանդր Պոլշկինը հետեւեալն է գրել. «Տեսէ՛ք Կոմս Եան Պոտոցկու ֆամիլորդական [գրութեմը], որի գիտական պրպտումներն այնքան հետաքրքիր են, որքան իսպանական վէպերը,» (*смотрите путешествие графа И. Потоцкого, коего ученые изыскания столь же занимательны, как и испанские романы*), նկատի ունենալով հէնց «Սարագոսայում գտնուած ձե-

³ Այս պատմական անհատի մասին ընդհանուր տեղեկութիւնների համար, տե՛ս. E. KRAKOWSKI, «Le comte Jan Potoc-ki», Paris 1963, D. TRIARE, *Oeuvre de Jean Potocki. Inventaire*, Paris 1985 e *Potocki, Essai*, Actes Sud 1991.

⁴ Պոտոցկու ճամփորդութիւններին Դ. Տրիարը նուիրել է մի այլ աշխատանք. D. TRIARE, «Regarder et comparer ou Jean Potockij en voyage», «Oswiecenia», 5, 1988, էջ 193-206: Հետաքրքիր է նաեւ Մ. Դորատոյի մի յօդուած. M. DORATO, *Jan Potocki interprete di Erodoto*, «ACME», v. LIV (3), 2001, էջ 3-34:

ռագիրը» վէպը, որը Ռուսաստանում շրջանառութեան մէջ էր 1805-1806 թուականներից ի վեր⁵: Չպէտք է մոռանալ նաեւ, որ այսպիսի գովաբանական կարծիք Պուշկինը յայտնել է իր Կովկասում եւ Հայաստանում կատարած ճամփորդութիւնը նկարագրող գրքում՝ «Ճամփորդութիւն դէպի Էրզրում 1829 թ.-ի արշաւանֆի ժամանակ», գրուած 1835թ.-ին⁶:

Պոտոցկու «Ճամփորդութիւն դէպի Աստրախանի եւ Կովկասի ստեպերը» աշխատութիւնը կարեւոր աշխարհագրական եւ ազգագրական արժէք ունի: Այն վերաբերում է միայն Հիւսիսային Կովկասին, բայց պարունակում է նաեւ մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ հայերի մասին, որոնք շարունակական բնակութիւն էին հաստատել յատկապէս Կովկասեան լեռնաշղթայի հիւսիսային փէշերին տեղակայուած Ղզլար եւ Մոզդուկ փոքր քաղաքներում: Տասնութերորդ դարի վերջին Ղզլարի հայ բնակչութիւնը բաղկացած էր մօտ 2000 անձից: Ղզլարից եկած հայեր բնակութիւն էին հաստատել նաեւ Մոզդուկ բերդաքաղաքում, որը հիմնուել էր 1763թ.-ին, եւ այդ դարի վերջին քառորդին դարձել Հիւսիսային Կովկասի ամենակարեւոր տնտեսական եւ առեւտրական կենտրոններից մէկը: Ինչպէս յայտնի է, այս համայնքների հայերը զբաղւում էին հիմնականում գիւղատնտեսութեամբ եւ կարեւոր դեր էին խաղացել խաղողի եւ մետաքսի մշակումը Հիւսիսային Կովկասում ծանօթացնելու գործում⁷: Կարեւոր է նշել, որ իր ճամփորդութեան ընթացքում Պոտոցկուն հանդիպած հայերը պատկանել են հասարակութեան բոլոր խաւերին, ինչպիսիք են քոչուոր հովիւներ, թարգմանիչներ, գիւղատնտեսներ, (ստրուկներ-

⁵ Տե՛ս Կալլուայի ներածութիւնը վերը նշուած խաբերէն թարգմանութեանը. *Manoscritto trovato a Saragozza*, էջ XX-XXI:

⁶ Պուշկինի այս ճամփորդութեան եւ հայերի հետ յարաբերութիւնների վերաբերեալ տե՛ս տողերիս հեղինակի յօդուածը. *Il viaggio a Arzum: l'Armenia deserta di Aleksandr Puškin*, S. BERTOLISSI (խմբագիր). «*Puškin e l'Oriente*», Napoli 2001, էջ. 41-54 (նոյնը նաեւ. «*L'Ararat e la gru. Studi sulla storia e la cultura degli armeni*», Milano 2003, էջ 137-149):

⁷ Այս գաղութների վերաբերեալ տե՛ս Գ. Գէորգեանի աշխատանքը՝ Գ. ԳԵՈՐԳԵԱՆ, «Ղզլար. Հայ ազգագրութիւն եւ քանաքիւսութիւն. միւսեր եւ ուսումնասիրութիւններ», Երեւան, 1980 եւ Լ. ՊՈՂՈՍԵԱՆԻ յօդուածը. «Հիւսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի առեւտրատնտեսական կեանքի պատմութիւնից (Ղզլար եւ Մոզդուկ. 18-րդ դար - 19-րդ դար առաջին կէս)», «Պատմա-բանասիրական հանդէս», 1986, n. 1, էջ 85-96:

րի) առեւտրականներ, հոգեւորականներ եւ ազնուականներ: Ինչ վերաբերում է վերջին դասակարգին, Պոտոցկին պատմում է մի ում «Մելիք Ջիւմշիդի [մասին], մի հայ ազնուական, որը մեծ համբաւ էր վայելում իր արժանիքների շնորհիւ»: Խօսքը այն Մելիք Ջիւմշիդի (կամ Ջիւմշուդի) մասին էր, որի հայրը հանրաճանաչ Վարանդեցի Մելիք Շահնազարն էր՝ յայտնի «Ղարաբաղի աղետ» մականունանմամբ, քանի որ ինքն էր այս շրջան կանչել Շուշիի խանութեան հիմնադիր փանահ խանին: Բայց Մելիք Ջիւմիշդին մենք դեռ կը վերադառնանք ներքեւում:

Ինձ յատկապէս հետաքրքրում է Պոտոցկու եւ Հայաստանի յարաբերութիւններին պատկանող մի դրուագ, որի մասին տեղեկանում ենք ոչ թէ այս, թերեւս ուշադիր, բայց ոչ յատուկ այս թեմային նուիրուած ճամփորդական նշումներից, բայց մի այլ տեքստից, որը Պոտոցկին շարադրել է մի քանի տարի աւելի ուշ, երբ այս՝ նախկինում Լեհաստանի ազատագրութեան համար պայքարող, լուսաւորիչը դարձել էր Ռուսական կայսրութեան ընդլայնման կողմնակիցներից մէկը: Դեռեւս 1802թ.-ին Պոտոցկին Ռուսաստանի նորապսակ կայսրին էր նուիրել իր *Histoire primitive de peuples de la Russie et du Caucase* («Ռուսաստանի եւ Կովկասի ժողովուրդների հնագոյն պատմութիւն») գիրքը, որը տպագրուել էր Պետերբուրգում ֆրանսերէն լեզուով, ինչպէս Պոտոցկու միւս բոլոր աշխատութիւնները: 1804թ.-ի դեկտեմբերին նա դարձել էր Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարութեան Ասիական բաժանմունքի գործակից⁸, որին նա նախկինում ներկայացրել էր Ասիական ակադեմիայի կազմաւորման մի կարեւոր նախագիծ, որն այդպէս էլ չէր իրականացուել, ինչպէս այս տիպի այլ բազմաթիւ նախագծեր⁹: Նրա մուտքը կայսրութեան վարչական ապարատը տեղի ունեցաւ շնորհիւ իշխան Ա. Չարտորիսկու, ազդութեամբ նոյնպէս լեհ, որը Պոտոցկու առաջին կնոջ քեռորդին էր: Այդ ժամանակ Չարտորիսկին Ռուսական կայսրութեան արտաքին գործերի նախարարն էր եւ բաւականին մտերիմ յարաբերութիւնների մէջ էր կայսեր հետ:

⁸ Տե՛ս Դ. Բոլվոնիւ, *Un Polonais au service de la Russie: Jean Potocki et l'expansion en Transcaucasie. 1804-1805*, «Cahiers du monde russe et soviétique», XIX (1-2), 1978, էջ 175:

⁹ Սրա վերաբերեալ տե՛ս Բ. Վ. ТАЙРОВА, *Проект Потоцкого относительно создания Азиатской Академии в России, Народы Азии и Африки*, 1973, с. 202-207.

Ահա այս փայլուն հայրենակցին էլ Պոտոցկին ուղարկել էր մի փաստաթուղթ իր նոր վարչական պարտականութիւնների բերումով 1805 թուականի սկզբին, եւ որը կ'ուզենայի այստեղ քննարկել: [1805 թուականի սկզբին Պոտոցկին], Դա մի յուշագիր է - *Mémoire de Jean Potocki à A. J. Czartoryski* - որտեղ ոչ միայն նկարագրուած է ռուսական սահմանների քաղաքական իրավիճակը կողկասում եւ կենտրոնական Ասիայում, բայց տրուած են նաեւ մասնաւոր ցուցմունքներ Անդրկովկասի եւ Խիւլայի խանաթի գրաւման վերաբերեալ: Շեշտենք, որ Պոտոցկու այս տեքստը չի կարելի համարել մի ինչ-որ ֆանտաստիկ ծրագիր. հեղինակը ժամանակի ամենակարեւոր արեւելագէտներից էր, նշուած վայրերի մեծ մասն անձնապէս այցելել էր եւ, բացի դրանից, կայսրութեան պաշտօնեայ էր: Փաստաթղթի ճշգրտութեան մասին են վկայում դրա վերաբերեալ գրաւոր կարծիքները, որոնք պահպանուած են ռուսական արխիւներում¹⁰: Աւելին, Պոտոցկու կողմից մշակուած պլանի մեծ մասն իրօք ներդրուել էր Ռուսաստանի կողմից, որը գրաւեց արեւելեան Անդրկովկասը, ներառեալ Ղարաբաղը՝ Պարսկաստանի հետ Գիւլիստանի խաղաղութեան պայմանագրով 1813 թուականին:

Պոտոցկու յուշագիրը, որը խօսում էր Ասիայում այնպիսի ռուսական քաղաքականութեան ստեղծման մասին, որը ոչ թէ անկանոն եւ պատահականութեան վրայ էր հիմնուած, այլ շարունակական եւ համակարգուած էր, «մի փաղափակմութիւն, որը չի փոփոխուում ըստ տուեալ պահի փաղափակմ իրադրութեան» («...un système politique asiatique, qui ... ne changéat pas avec le circonstances politiques du moment»)¹¹, մեծ նշանակութիւն էր տալիս Հայաստանին: Յիշենք, որ 1801թ.-ին Ռուսաստանը կայսրութեանն էր միացրել արեւելեան Վրաստանը, ինչպէս յայտնի է բաւականին խառնաշփոթ եւ հակասական հանգամանքներում, որն արդէն 1783 թուականի Գէորգիեւսկի պայմանագրով անցել էր կայսրութեան հովանաւորութեան տակ: Բայց Պոտոցկին Հայաստանի համար նախատեսել էր մի այլ ճակատագիր, եւ այն է՝ անկախութիւն: Յուշագրի երկրորդ մասում, որի վերնագիրն է «Պարսկական գործեր» *Affaires de Perse*, նա առաջարկում է, որ Հայաստանի այն ամբողջ հատուածը, որը գտնւում է Արաքսի

¹⁰ Stéu D. BEAUVOIS, *Un Polonais au service de la Russie: Jean Potocki et l'expansion en Transcaucasie. 1804-1805*, էջ 176:

¹¹ *Mémoire de Jean Potockii à A.J. Czartoryski*, նոյն տեղում, էջ 180:

ձախ ափին. «ունենայ իր ինքնուրոյն կառավարութիւնն ու օրէնքները, առանց որեւէ պարսիկ պաշտօնեայի կամ զինուորների ներկայութեան» («...se gouverne par ses propres lois, sans qu'aucun chef ou soldat persan y pût demeur»)¹²: Նա առաջարկում էր նաեւ, որ Հայաստանի տուեալ տարածքները, «որոնք մեծ մասնով կը դարձնենք, կառավարեն Մելիքները՝ ոմանք ժառանգական իրաւունքով, իսկ ոմանք՝ ընտրուած, ըստ տուեալ շրջանի սովորութիւնների, իսկ նրանց նախագահը լինի Արարատի հայրապետը»: («...que nous rendons indépendante sera gouvernée par des Meliks, les uns héréditaires et d'autres électives, selon l'usage des cantons. Il seront présidés par le patriarche d'Ararat»)¹³.

Ուրեմն Պոտոցկու նախագիծը ոչ միայն ընդունում էր Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարի հոգեւոր գերադասութիւնը, բայց նաեւ Արեւելեան Հայաստանի մելիքների կարեւորութիւնը, որոնք Հայ հին ազնուականութեան ժառանգորդներն էին եւ կարողացել էին իրենց գոյութիւնը պահպանել յատկապէս հին Սիւնիքի եւ Ղարաբաղ/Արցախի շրջաններում, այսպիսով պահպանելով նաեւ Հայերի ինքնակառավարումը՝ չնայած պաշտօնապէս Պարսկաստանի ենթակայութեան տակ գտնուելուն¹⁴: Այս մանրա-

¹² Նոյն տեղում, էջ 185:

¹³ Նոյն տեղում:

¹⁴ Մելիքների մասին, բացի Բաֆֆու միշտ արժէքաւոր հանդիսացող գրքերից, չնայած որոշ անձգրտութիւնների, (Նամայի մելիքութիւնները. 1600- 1827. Նիւթեր հայոց նոր պատմութեան համար, Թիֆլիս 1882, տպուած նաեւ Նոյնի Երկերի ժողովածու, հտ. IX, Երեւան 1987, էջ 417-625; որի ուսման թարգմանութիւնը՝ (Мелікства Хамсы, Ереван 1991) եւ Ա. Բեկմազարեանցի աշխատութիւնից, (Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ 1886), ուշադրութեան արժանի են նաեւ հետեւեալ ուսումնասիրութիւնները եւ գրքերը: ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ, Նիւթեր հայ մելիքութեան մասին. I պրակ. Դիզակի մելիքութիւնը, Վաղարշապատ, 1913 եւ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ (ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ), Հայ մելիքութեան մասին. II պրակ. Դոփեանք եւ մելիք-Շահնազարեանք, էջմիածին 1914: Խորհրդային շրջանում մելիքութեան մասին գրուած ոչ բազմաթիւ աշխատանքներից նշենք մի քանի յօդուածներ. Բ. ԲԱՐՍԻՈՒԴԱՐԵԱՆ, Գեղարքունիի մելիքներն ու տամուտները ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի» 8 (1967), էջ 191-227, Յ. ՓԱՓԱԶԵԱՆ, Մելիք Եգանի ընդունարանի վիմագիր արձանագրութիւնը, «Լրաբեր Հաս. Գիտ.» 1985, n 5, էջ 75-78 եւ Մ. ՍԱՐԳՍԵԱՆ, Մելիքական քնակելի համկառոյց Տոյ աւանում, «Պատմա-մարանասիրական հանդէս», 1987, n. 3, էջ 132-140. Վերջերս լոյս տեսած

մասնութիւնն ինձ համար յատկապէս հետաքրքիր է, քանի որ վերջին տարիներին բազմիցս եմ անդրադարձել Անդրկովկասի հայ ազնուականութեան պատմութեանը, թարգմանելով Դաւիթ Բէկի ապստամբութեան վերաբերեալ տասնութերորդ դարի ժամանակագրութիւնը¹⁵ եւ Ղարաբաղի մելիքների վերաբերեալ Բաֆֆու կարեւոր աշխատանքը՝ «Խամսայի մելիքութիւնները. 1600-1827», ինչպէս նաեւ տպագրել այս թեմայի շուրջ իմ կատարած հետազոտութիւնների նախնական արդիւնքները¹⁶:

Մելիքների դերը եւ նոյնիսկ գոյութիւնը, ինչպէս նաեւ նոր դարաշրջանի հայ ազնուականութեան պատմութիւնը շատ քիչ են ուսումնասիրուած արեւմտեան հայագէտների կողմից, ո-

գործերից նշեք. Ա. ԼՈՒԼԵԱՆ, Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարամբները, Երեւան 2001; եւ Ա. ՄԱՂԱԼԵԱՆԻ յօդուածները. Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Բեգլարեանի տոհմածառը, «Կրթութիւնը եւ գիտութիւնը Արցախում», 2003, n. 1-2, էջ 11-14; Ջրաբերդի գաւառի տիրակալ Մելիք-Իսրայելի տոհմածառը, «Հայոց Պատմութեան հարցեր», 4, 2003, էջ 36-40; Արցախի Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Բեգլարեանների Հնդկաստանի միւլը, «Հանդէս ամսօրեայ» 2004 (1-12), էջ 475-491; Արցախի Գիւլիստան, Ջրաբերդի եւ Դիգակի գաւառների մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», 2004, էջ 93-121. Արեւմտեան հայագէտներից այս թեմային անդրադարձել է Ռ. Հիւսէնը իր մի քանի յօդուածներում. R. HEWSEN, *The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study*, «Revue des Etudes Arménien», 1972, n. 9, էջ 285-329; *The Meliks of Eastern Armenia II*, 1973-74, n. 10, 282-300; *The Meliks of Eastern Armenia III*, 1975-76, n. 12, էջ 219-243; *The Meliks of Eastern Armenia IV*, XIV (1980), pp. 459-470; *Three Armenian Noble Families of the Russian Empire [The Meliks of Eastern Armenia V]*, «Հասկ», 1981-1982, էջ 389-400; *The Meliks of Eastern Armenia VI: the House of Aghamaleanc'*, «Բազմավէպ», 1984, էջ 319-333:

¹⁵ *Le guerre di Dawit' Bēk, un eroe armeno del XVIII secolo (ներածութիւն, թարգմանութիւն եւ մեկնաբանութիւններ)*, Guerini & Associati, Milano 1997:

¹⁶ *Nobility and Monarchy in Eighteenth Century Armenia. Introduction to a New Study*, «Iran & the Caucasus: Research Papers from the Caucasian Centre for the Iranian Studies», Երեւան-Լայդէն, Brill, 2004, 8.1, էջ 53-63 [Լոյս է ընծայուել նաեւ. *Armenian Studies Today and Development Perspectives. International Congress, Yerevan, September 15-20, 2003. Collection of Papers, Erevan 2004*, էջ 329-333] եւ Մեմֆ մեծ Հայաստանեաց իշխաններու եւ մելիքներու. *Introduzione allo studio della nobiltà armena in Transcaucasia nel XVIII secolo*, V. CALZOLARI, A. SIRINIAN, B.L. ZEKIYAN (խմբ.), *Dall'Italia e dall'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian*, Dipartimento di Paleografia e Medievistica, Università di Bologna, Bologna 2004, էջ 181-205:

րոնք իրենց ուշադրութիւնը բեւեռել են յատկապէս Հայ Եկեղեցուն՝ Հայ Ժողովրդի միասնութիւնն ապահովող կարեւորագոյն տարրի, առեւտրական դինամիկ դասի զարգացման, որը փաստօրէն փոխարինեց ազնուականներին որպէս Հայ հասարակութեան ղեկավար տարր, եւ բազմաթիւ աշխոյժ Հայ գաղութների պատմութեանը: Արեւմտեան հայագէտներից երկուսն են, որ բացառութիւն են կազմում, ըստ որում արտառոց գերազանց բացառութիւններ, Թումանովը¹⁷ եւ Հիւսէնը¹⁸: Ինձ թւում է, սակայն, որ սա մի շատ կարեւոր թեմա է, ինչպէս այն ճշգրիտ զնահատել են բազմաթիւ արեւելահայ գրողներ եւ պատմաբաններ ղեռնա Ռուսական կայսրութեան եւ Խորհրդային Միութեան ժամանակներից ի վեր, չնայած յայտնի գաղափարախօսական թեքումներին, մինչեւ մեր օրերը:

Իրօք, Սիւնիքի եւ Ղարաբաղի մելիքները ամբողջ տասնութ-թերորդ դարում մեծ քաղաքական կշիռ են ունեցել: Հանրայայտ Իսրայէլ Օրին¹⁹, որը 1680 թուականից մինչեւ տասնեօթերորդ դարի վերջին առանց յաջողութեան դեգերեց տարբեր եւրոպական դիւաններում, փորձելով իր ժողովրդի համար օգնութիւն գտնել մոսկովմանական տիրապետողների դէմ, սկիզբ դրեց արեւելահայերի ռուսասէր կողմնորոշմանը ժամանակակից պատմութեան մէջ²⁰: Պետրոս Մեծի 1722-23 թուականների դէպի Կովկաս ռազ-

¹⁷ *Studies in Christian Caucasian History*, Washington, DC 1963; *Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne*, Roma 1976; *Les dinasties de la Caucasic chrétienne de l'Antiquité jusqu'au XIX siècle. Tables généalogiques et chronologiques*, Roma 1990.

¹⁸ Տէս նշում 14:

¹⁹ Օրու վերաբերեալ, տե՛ս յատկապէս, A. JOHANNISSIAN, *Israel Ori und die armenische Befreiungsidee*, Munchen 1913; Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Իսրայէլ Օրի, Երեւան 1945; Յ. ՔԻՒՐՏՆԵԱՆ, Իսրայէլ Օրի, Վենետիկ – Սբ. Ղազար 1960; Ա. ԷՍՍԵՅԵԱՆ, *The Mission of Israel Ori for the Liberation of Armenia*, «Recent Studies in Modern Armenian History», Cambridge (MA) 1972, էջ 1-10: Որոշ խորհրդային գիտնականներ կասկած են յայտնել Իսրայէլ Օրու ազնուական ծագման վերաբերեալ, բայց թւում է, որ սա աւելի գաղափարախօսութեան արդիւնք էր, քան փաստաթղթերի վրայ հիմնուած կարծիք: Տէս, Ս. Բ. Արутչոյան; *Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века*, Москва 1954, էջ 143-148:

²⁰ Այս թեմայի շուրջ տե՛ս Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Հայ-ռուս օրինադրաբանական ծագման խնդիրը, էջմիածին, 1921; Նոյնի, Հայերի ռուսական կողմնորոշ-

մարշալի ժամանակ հայ ժողովրդի ազատագրական շարժման հիմնական ղեկավարները պատկանում էին այս ազնուական դասին: Ղարաբաղում այս շարժման խրախուսիչն էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Զալալեանը, Խաչենի մելիքների ընտանիքից, որոնց անդամները դարեր շարունակ զբաղեցնում էին նաեւ այս հոգեւոր պաշտօնը²¹: Ինչ վերաբերում է հարաւային Սիւնիքին (կամ Ղափանին), շարժման գլուխ կանգնած էր Դաւիթ Բէկը, որի արմատներն անորոշ են, բայց որն անկասկած պատկանում էր փոքր ազնուականութեան դասին²²: Այսպիսով տասնութերորդ դարի առաջին երեսնամեակի ընթացքում Արեւելեան Հայաստանի մելիքները շարունակում էին պահպանել իրենց աւանդական դերը որպէս քաղաքական, հասարակական եւ ռազմական ղեկավար դաս²³: Բայց 1722-1730 թուականների ազատագրական շարժումը փաստօրէն հանդիսացաւ հայ մելիքների կարապի երգը, քանի որ դրանից յետոյ մելիքների դասն արագ անկում ապրեց: Արեւելեան Հայաստանի մելիքների դրութիւնը հետզհետէ անկայուն էր դառնում: Մի կողմից, նրանք ցանկանում էին թօթափել իսլամական տիրապետողների լուծը, իսկ միւս կողմից՝ պահպանել իրենց աւանդական իշխանութիւնը եւ իրաւունքները, բայց 1733 թուականի ռուսական զօրքի նահանջից յետոյ, ստիպուած էին վերստին ընդունել պարսկական տիրապետութիւնը: Չնայած նրանց իշխանական իրաւունքները վերահաստատուեցին 1736 թուականին թագադրուած Նադիր Շահի կողմից, տասնութերորդ դարի երկրորդ կէսին մելիքների դիրքը

մամ Լախապատմութիւնից, «Պատմա-բանասիրական հանդէս», 1958, n. 1, էջ 65-109:

²¹ S. H. HEWSEN, *The Meliks of Eastern Armenia: A Preliminar Study*, էջ 317-318:

²² Այս անձնաւորութեան մասին, տե՛ս տողերիս հեղինակի ծանօթութիւնը Մխիթարեան Հ. Ղուկաս Սեբաստացու 1736-1737թթ. գրուած ժամանակագրութեան թարգմանութեանը. *Le guerre di Dawit' Bek, un eroe armeno del XVIII secolo*, իտալերէն թարգմանութիւնը, Milano 1997, էջ 11-45. Դաւիթ Բէկի ծագման խնդրի վերաբերեալ տե՛ս յատկապէս Ս. ՕՐԲԵԼԵԱՆ, Դաւիթ Բէկի ծագումնաբանութեան խնդրի մասին, «Բանբեր Հայաստանի արխիւներ», 2 (1972), էջ 72-85: Այս հարցի շուրջ մանրամասն տե՛ս Ս. Պ. Արутչոյան, *Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века*, с. 252-258.

²³ Այս թեմայի շուրջ, տե՛ս Ա. Ն. Խաչատրյան, *Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского содружества. Исследования и документы*, Ереван 1968.

լրջօրէն վնասուեց, երբ Ղարաբաղի սրտում Շուշիում, կազմաւորուեց մուսուլմանական մի խանութիւն²⁴: Ինչպէս վշտացած խորհում էր Բաֆֆին այս շրջանի մեկիքներին նուիրուած իր պատմական աշխատութիւնում, նրանց միջեւ առաջացած անհամաձայնութիւնները նպաստեցին նրանց աւանդական իշխանութեան արագ անկմանը²⁵: Յատկապէս բացասական դեր խաղաց Վարանդեցի Մելիք Շահնազարը, այն Մելիք Ջիւմշիդի (Մելիք Ջիւմշուդ) հայրը, որին հանդիպել էր Պոտոցկին: Նա էր, որ այստեղ հրաւիրեց Շուշիի խանութեան հիմնադիր Փանահ Խանին: Վերջինս իր որդի Իբրահիմի հետ միասին ծանր հարուած հասցրեց Ղարաբաղի հայ բնակչութեանը: Չնայած դրան, երբ տասնութերորդ դարի 80-ական թուականներին Ռուսաստանը սկսեց նորից ակտիւօրէն հետաքրքրուել Կովկասի ճակատագրով, հայ մեկիքներն իրենց լրիւ պատրաստակամութիւնը յայտնեցին՝ նրա կողքին կռուելու համար:

Նախատեսուած ռուսական յարձակումն այնուամենայնիւ տեղի չունեցաւ՝ մի անգամ եւս յուսաթափ անելով մեկիքներին եւ նոյնիսկ վտանգի տակ դնելով նրանց կեանքը: Իրօք, երբ 1784 թուականին ռուսասէր մեկիքներ Գիւլիստանցի Աբով Բեգլարեանը, Ջրաբերդցի Մելիքում Իսրայէլեանը եւ Դիզակցի Բախտամ Աւանեանը Գանձասարի կաթողիկոս Յովհաննէսի (Հասան-Ջալալեան) հետ միասին օգնութեան դիմեցին իշխան Պոտյոմկինին, Շուշիի խան Իբրահիմն այդ մասին տեղեկացաւ, ձեռքաւորեց իշխաններին եւ թունաւորեց կաթողիկոսին²⁶: Սա մի ծանր հարուած էր, որից մեկիքները երբեք էլ լիովին չաթափուեցին: Աբովը եւ Մելիքումը կարողացան փախչել եւ ընդունել Գանձակի խան Ջաւադի պաշտպանութիւնը, որից յետոյ 1788 թուականին նրանց միացաւ իրենց ենթակայ բնակչութեան մեծ մասը²⁷: Սա ամբողջ յաջող տասնամեակի ընթացքում ծանր ճնշման ենթարկուած հայ բնակչութեան արտագաղթի սկիզբն էր, որն աւելի

²⁴ Այս հարցերի շուրջ, տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. IV, էջ 175-189:

²⁵ ՐԱՖԻԻ, Երկերի ժողովածու, Հ. IX, էջ 446-506. Ղարաբաղի պատմութեան համար շատ կարեւոր է նաեւ, Միրզա Ջամալ Ջուանշիրի ժամանակագրութիւնը, որը թարգմանուած է անգլերէն. G. A. BOURNOUTIAN: *A History of Qarabagh, An Annotated Translation of Mirza Jamal Javanshir Qarabaghi's «Tarikh-e Qarabagh»*, Costa Mesa (Ca.), 1994, յատկապէս 45-108:

²⁶ R. H. HEWSEN, *Russian-Armenian Relations, 1700-1828*, Cambridge (Ma.) 1984, p. 22.

²⁷ ՐԱՖԻԻ, Երկերի ժողովածու, 495:

մեծ թափ ստացաւ յատկապէս Պարսկաստանի Քաջար հարստութեան հիմնադիր Աղա Մուհամմէդ խանի 1795 եւ 1797թթ. Անդրկովկաս կատարած ակերիչ արշաւանքերից յետոյ: Այս արշաւանքներին հետեւեցին դաժան սովը եւ սեւ ծաղիկի համաճարակը, որոնք ստիպեցին Ղարաբաղի հազարաւոր հայերի հետեւել իրենց աքսորուած մելիքներին՝ բնակութիւն հաստատելով յատկապէս Վրաստանում եւ Ռուսաստանի հարաւում, իրենց հայրենի հողերը թողնելով կիսաանապատային վիճակում²⁸: Սրա հետեւանքով, Ղարաբաղի մելիքներից եւ ոչ մէկը չկարողացաւ միանալ գեներալ Զուբովի զօրքին, որն այստեղ էր ուղարկուել 1796 թուականին՝ չրջանում Ռուսաստանի դիրքը վերականգնելու համար: Եկատերինա Բ. կայսրուհու յանկարծակի մահը ստիպեց ռուսական յաղթական զօրքերին նահանջել, բայց 1799թ. Ղարաբաղի մելիքներն իրենց դրեցին Պետերբուրգի ենթակայութեան տակ²⁹: Կայսր Պաւել Ա. ճանաչեց նրանց իրավիճակը եւ խոստացաւ թոյլտուութիւն տալ արտագաղթել Ռուսաստանի կամ արեւելեան Վրաստանի տարածք, որը Ռուսաստանը կը գրաւէր մօտ ապագայում³⁰:

Որպէսզի հասկանանք մելիքների դերը Ղարաբաղում հայերի ինքնութեան պահպանման գործում, նշենք, թէ ինչպէս նրանց քաղաքական ճգնաժամին հետեւեց այս տարածքի ժամանակաւոր, բայց լուրջ հայազրկումը, որից օգտուեցին որոշ մուսուլմանական ցեղեր եւ այստեղ բնակութիւն հաստատեցին: Միայն Պարսկաստանի հետ Գիւլիստանի պայմանագրի (1813) ստորագրումից յետոյ, ըստ որի Ղարաբաղը եւ ամբողջ արեւելեան Անդրկովկասը կցուեցին Ռուսաստանին, հայերը զանգուածային կերպով հետ վերադարձան այս շրջան՝ դրա բնակչութեան մեծամասնութիւնը կազմելով միայն թուրքմենչայի (1828) եւ Ադրիանոպոլի (1829) պայմանագրերից յետոյ Պարսկաստանի եւ թուրքիայի հետ, որոնք այս երկրների հայերին արտագաղթելու հնարաւորութիւն տուեցին³¹: Ի միջի այլոց նշենք, որ ադրբե-

²⁸ Նոյն տեղում, 530-531:

²⁹ Տե՛ս, Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800, IV, նշ., փաստաթուղթ 348, էջ 501:

³⁰ Նոյն տեղում, փաստաթուղթ 355, էջ 507:

³¹ Ըստ ռուսական կայսրութեան 1832-33թթ. անցկացուած վիճակագրական հաշուարկների, այսպէս կոչուած Камеральное описание, Ղարաբաղի լեռնային շրջաններում հայերի թիւը հասնում էր 28.034-ի, իսկ մուսուլմաններինը՝ 24.740. Տե՛ս ЦГИА РА, ф. Թերթ 93, հատոր 1, փաստաթուղթ 50, էջ 939-940:

ջանցիների կողմից այսօր առաջ բերուած թեզը, թէ հայերը միայն վերջերս են բնակութիւն հաստատել Ղարաբաղում, հիմնուած է հէնց ԺԹ. դարի առաջին տասնամեակների վիճակագրական տուեալների վրայ³²: Այս քաղաքական, հասարակական եւ վիճակագրական ճշմարտամի լրջութեան մասին է վկայում նոյն Վարանդեցի Մելիք Զիւմշուդի կողմից գեներալ Մինաս Լազարեւին 1806թ. դեկտեմբերին ուղարկուած մի նամակ, որտեղ նա բացատրում է, որ ի վիճակի չէ ոտքի հանել մի այնպիսի ռազմական ուժ, որ հաւասարագոր լինի իր նախահայրերի վարած զօրքին, քանի որ 1795թ.-ի Աղա Մուհամմէդի արշաւանքից յետոյ Ղարաբաղի բնակչութիւնը ցրուել էր ամբողջ Անդրկովկասով մէկ: Դրա համար նա իր լրիւ հաւատարմութիւնը ռուսական կայսրութեանը յայտարարելուց յետոյ, խնդրում էր հասցէագրին, որ կառավարութիւնից ստանար փախստականների վերադարձը հայրենիք խրախուսող միջոցներ, ինչպէս նաեւ հարկերից ժամանակաւոր ազատութիւն, որը հնարաւորութիւն կը տար կարգաւորել տուեալ ցաւալի իրավիճակը եւ վերստեղծել ռազմական միաւորներ, որոնք կը կարողանային ռուսական զօրքերի կողքին պայքարել ընդհանուր թշնամու դէմ³³: Նոյն 1806թ.-ին Զիւմշուդը եւ այլ չորս ղարաբաղեան մելիքներ միասնական նամակ գրեցին գեներալ Լազարեւին, որտեղ մի կողմից իրենց դառնութիւնն էին յայտնում յօգուտ Ռուսաստանի իրենց ռազմական գործողութիւնները հազիւ թէ ճանաչելու պատճառով, իսկ միւս կողմից օգնութիւն էին խնդրում իրենց տարածքները Ռուսաստանի հովանաւորութեան տակ ծաղկուն դարձնելու համար, որը հնարաւորութիւն կը տար աւելի սերտօրէն համագործակցել կայսրութեան հետ³⁴: Չնայած իրենց դժուար իրավիճակին, հայ մելիքներն ըստ կարողութեան համագործակցել էին ռուսների հետ՝ Պարսկաստանի դէմ 1804թ.-ին սկսուած պատերազմի ընթացքում: Յատկապէս կարեւոր էր Երեւանի պաշարմանը Ռուստոմ Բէկի, Գիւլիստանցի Մելիք Աբովի որդու, մասնակցութիւնը: Հայ զինուորական միաւորի ղեկավար Ռուստոմ Բէկը

³² Այս հարցի շուրջ, Գ. Բ. Абрамян, К вопросу об армянстве Арцаха как а пришельцах, «Լրաբեր» 1993, n. 1, էջ 9-23:

³³ Տէս Ը. Агаян, Просоединение Восточной Армении к России. Сборник материалов, նշ., Կ. I, փաստաթուղթ 329, էջ 392-393:

³⁴ Այս նամակը, որը Կ. Աղաբեանի կողմից խմբագրուած բազմիցս մէջբերուած փաստաթղթերի հաւաքածուի մէջ չի ընդգրկուել, արտատպել է Բաֆֆին, Երկերի ժողովածու, նշ. էջ 557-558:

ռուսների կողքին պայքարեց մինչեւ գերի ընկնելը եւ Թաւրիզ տեղափոխուելը, որտեղ նրա մահուան հրամանն արձակեց հէնց շահի որդին՝ Աբբաս Միրզան, որը պարսկական զօրքերի գերագոյն հրամանատարն էր³⁵։ Լոռի-Փամբակի հայերը եւս կազմել էին զինուորական միաւորներ եւ պայքարել ռուսների կողքին՝ Մելիք Աբովի ղեկավարութեամբ, որը ցանկանում էր լուծել իր որդու մահուան վրէժը³⁶։ Նոյնը տեղի էր ունեցել նաեւ Ղարաբաղում, որտեղ Մելիք Զիւմշուղը խիզախաբար պայքարել էր պարսիկների դէմ մինչեւ պատերազմի վերջը։ 1806թ.-ի Շուշիի ճակատամարտի ժամանակ նա սպանել էր քաղաքի խան Իբրահիմին, հայ մելիքների պատմական թշնամուն, որի համար ստացել զնդապետի աստիճան³⁷։

Ռուսների տեսակէտից, չնայած իրենց ակնյայտ թուլացմանը, հայ մելիքներն այնուամենայնիւ կարեւոր դեր խաղացին պատերազմի ժամանակ։ Պատահական չէ, որ 1813թ.-ի ռուս-պարսկական Գիւլիստանի պայմանագիրը ստորագրեցին նաեւ Ղարաբաղի հինգ մելիքներ³⁸, որոնց դերը, սակայն, յաջորդ տասնամեակներին բաւական սահմանափակ մնաց³⁹։

Եզրակացութիւն

Փաստօրէն Պոտոցկու կողմից հայ մելիքներին հնարաւոր անկախ (արեւելեան) Հայաստանի քաղաքական միջուկի դեր վերագրելը ոչ թէ պատահական էր, այլ հիմնուած էր ճշգրիտ տեղեկութիւնների, վայրերի եւ իրերի դրուածքի վերաբերեալ խորը գիտելիքների վրայ։ Այս հետազոտութեան յաջորդ փուլի ընթացքում հետաքրքիր կը լինի ճշտել, թէ արդեօք Պոտոցկին գիտէր 1783թ.-ին Կայսրութեանը ներկայացուած երկու նախագծերի մասին, եռուն զինուորական պատրաստութիւնների ընթացքում, երբ անկախ հայ պետականութեան վերականգնումը

³⁵ Տէ'ս Հայ Ժողովրդի պատմութիւն, Կ. V, Երեւան, 1974, էջ 127։

³⁶ Նոյն տեղում, 128։

³⁷ Տէ'ս ՐԱՖԻԻ, Երկերի ժողովածու, նշ., էջ 553, եւ Հայ Ժողովրդի պատմութիւն, նշ. էջ 128։

³⁸ Տէ'ս P. DONABEDIAN եւ CL. MUTAFIAN, *Arsakh-Histoire du Karabagh*, Փարիզ, 1990, էջ 33։

³⁹ Թատկապէս, քանի որ նրանց ազնուական տիտղոսները չճանաչուեցին, այլ միայն անձնական արժանիքները։ Տէ'ս R. H. HEWSEN, *The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study*, նշ., էջ 295։

չատ մօտ էր թւում: Հայ պատմագրութեան մէջ այս նախագծերը յայտնի են «Հիւսիսային ծրագիր» եւ «Հարաւային ծրագիր» վերնագրերով⁴⁰, քանի որ մէկը մշակել էր արքեպիսկոպոս Յովսէփ Արղղութեանը Ռուսաստանում⁴¹, իսկ միւսը՝ Հնդկաստանում, առեւտրական Շահամիր Շահամիրեանը, Մադրասի հայ գաղութի ազդեցիկ դէմքերից մէկը⁴²: Պոտոցիին կարող էր նաեւ

⁴⁰ Այս նախագծերի տեքստերը գտնւում են. Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800, ԵՂ., փաստաթուղթ 176. Այս երկու նախագծերի միջեւ կապը տարբեր ձեւի է մեկնաբանուել ժամանակակից հայ պատմագրութեան կողմից: Հ. Ութմիսեան եւ Վ. ՅԱԿՈԲԵԱՆ, Հայ ազատագրական գաղափարների երկու ծրագիր XVIII դարի երկրորդ կեսին, «Ուսանողների գիտական աշխատութիւնների ժողովածու», 1941, Խ. 3, էջ 71-161; Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Հայ առաջաւոր հասարակական-քաղաքական մտքի պատմութիւնից (XVIII դարի երկրորդ կես), Երեւան 1957; Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, XVIII դարում գրուած հայ ռուսական դաշնագրու հարցի շուրջ, «Տեղեկագիր», 1958, էջ 139-160; Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն, Հ. II, Երեւան, 1964, էջ 161-175; Վ. ԴԻԼԻՅԵԱՆ, Լազարեանների հասարակական-քաղաքական գործունէութեան պատմութիւնից (XVIII դարի երկրորդ կես), Երեւան 1966, էջ 161-163; Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, Ռուսաստանի եւ Հնդկաստանի հայկական գաղութները XIII դարի վերջին քառորդի հայ ազատագրական շարժումներում, Երեւան (խմբ.), XVI-XVII դարերի հայ ազատագրական շարժումները եւ հայ գաղթավայրերը. Յօդուածների ժողովածու, Երեւան, 1989, էջ 213-214:

⁴¹ Այս անձնաւորութեան շուրջ, տե՛ս յատկապէս ԼԵՕ, Յովսէփ կաթողիկոս Արղղութեան, Թիֆլիս 1902:

⁴² Հնդկաստանում հայ գաղութի մասին ընդհանուր առմամբ, տե՛ս Ա. ԱԼՊՈՅԱՆԵԱՆ, Պատմութիւն հայ գաղթականութեան, II, Կահիրէ, 1961, Հ. III, էջ 294-423; Տ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, Հնդկաստան, Երուսաղէմ 1941; M. J. SETH, Armenians in India, Calcutta 1983; Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. IV, Երեւան 1972, էջ 337-347. Մադրասի խմբի մասին, տե՛ս Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութիւն, ԵՂ., Հ. II, էջ 151-150; 161-174 եւ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, Ռուսաստանի եւ Հնդկաստանի հայկական գաղութները XVIII դարի վերջին քառորդի հայ ազատագրական շարժումներում, ԵՂ. էջ 187-216, եւ վերջապէս, H. SIRUNI, Le role des arméniens de l'Inde dans le mouvement d'émancipation du peuple arménien, «Acta et Studia Orientalia», 1967, Հ. 5-6, էջ 302-336, G. J. LIBARIDIAN, The Ideology of Armenian Liberation: The Development of Armenian Political Thought before the Revolution (1639-1885), UCLA 1987 (չապուած դոկտորական թեզ), 55-68 եւ V. GHOUKASSIAN, Quest for Enlightenment and Liberation. The Case of the Armenian Community of India in the Eighteenth Century, in R. G. HOVANNISIAN, D. N. MYERS (eds.), Enlightenment

Ժանօթ լինել Յովսէփ Արղութեանի յուշերին Ղարաբաղի մելիքների վերաբերեալ գրուած 1790 թուականին⁴³:

Վերջապէս պէտք է շեշտել, որ բացի Ռուսական կայսրութեան քաղաքական շահերից, Պոտոցկոն Հայաստանի անկախութեան գաղափարը գրաւում էր նաեւ այս երկիրը վերածնելու եւ այն այլ ազգերի շարքին դասելու տեսակէտից. ("... *renaître de ses cendres et être encore comptée au nombre des nations*"), քանի որ ըստ Պոտոցկոն «Հայաստանում առկայ են բոլոր այն աւանդոյթները, կայունութիւնը եւ արժէքները, որոնք բնորոշ են լաւ գործարարներին: Լաւ կը լինէր, եթէ Կայսրը պարսիկներին պատժէր միայն մի ժողովրդի երջանիկ դարձնելով, որն իրօք չի ստեղծուել եւ արժանի չի հինգ դար շարունակ շղթաների մէջ ապրելու համար»: ("...*l'Arménie a des moeurs, de la constance, de l'économie et toutes les vertus qui peuvent constituer un bon négociant. Il serait beau à l'empereur de ne punir les Persans qu'en faisant le bonheur d'un peuple qui n'est nullement fait pour porter, et ne le mérite pas, les fers qu'il porte depuis cinq siècles*")⁴⁴.

Պոտոցկոն ծրագրի այս մասը երբեք չիրականացուեց, քանի որ Անդրկովկասի գրաւման ժամանակ Ռուսաստանը նախընտրեց Արեւելեան Հայաստանի տարածքը կցել կայսրութեանը եւ ոչ թէ նրան անկախութիւն շնորհել իր հովանաւորութեան տակ: Բայց ինձ թւում է, որ Պոտոցկոն պէս դէմքի հետաքրքրութիւնը Հայաստանի անկախութեան վերաբերեալ արժանի է յիշատակութեան:

ԱԼՏՈ ՖԵՐՐԱՐԻ

and Diaspora: The Armenian and Jewish Cases, Atlanta (Ge.), 1999, էջ 145-180; A. FERRARI, *L'eccentrico illuminismo armeno. Le colonie dell'India nella seconda metà del XVIII secolo*, «Annali di Ca' Foscari», XXXVIII, 3, 1999 (Serie orientale 30), էջ 105-131 (նոյնը նաեւ, *L'Ararat e la gru. Studi sulla storia e la cultura degli armeni*, նշ. էջ 103-125):

⁴³ Այս փաստաթուղթը՝ Историческая справка о карабахских меликах, составленная Иосифом Арзутинским, գտնւում է Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800, Կ. IV, նշ., փաստաթուղթ 251, էջ 381-386. Նմանատիպ փաստաթուղթ ուղարկուել էր նաեւ Պոտոցկինին Արղութեանի կողմից 1783թ. ին: Նոյն տեղում, փաստաթուղթ 181:

⁴⁴ *Mémoire de Jean Potockii à A.J. Czartoryski*, նշ., էջ 186:

Jan Potocki's plan for the liberation of Armenia

ALDO FERRARI

(summary)

This paper deals with the project for the liberation of (Eastern) Armenia by the famous Polish writer and scholar count Jan Potocki (1761-1815).

After becoming an officer of the Asiatic Department of the Foreign Affairs Ministry, he wrote in 1805 a record – *Mémoire de Jean Potocki à A. J. Czartoryski* – where he suggested that the Armenian historical region situated on the left bank of Arax river “...se gouverne par ses propres lois, sans qu’aucun chef ou soldat persan y pût demereur”. The most interesting aspect of this document is the proposal that the newly independent Armenia had to be ruled by the scions of the ancient national nobility, the Meliks. According to Potocki’s words, that part of Armenia “...que nous rendons indépendante sera gouvernée par des Meliks, les uns héréditaires et d’autres électives, selon l’usage des cantons”. His reference to the Meliks, who were at that time cooperating with Russian army against Ottomans and Persians, shows Potocki’s good knowledge of the history and of the political situation of Eastern Armenia.

Though Eastern Armenia did not become independent, but only a region of Russian Empire, Potocki’s interest toward Armenian cause and his understanding of the role of the Meliks are worth of attention.